ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.4/53127-2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-323-23.10.2019-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի նոյեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1641 - Ա որոշումը:

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Կատարող՝ Հ. Դավեյան
Հեռ. 515685

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-323-23.10.2019-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍ-ՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Նախատեսված կարգավորումների և դրանով հետապնդվող նպատակների միջև առկա է ողջամիտ հարաբերակցություն, այդուհանդերձ նախագծային դրույթների կիրառման ընթացքում իրավական խնդիրներից խուսափելու, ինչպես նաև նախագծով հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու համար ստորև ներկայացնում ենք նախագծի վերաբերյալ որոշ նկատառումներ:

Նախևառաջ անհրաժեշտ է նկատի ունենալ ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման 12-րդ հավելվածի 12-րդ կետի դրույթները, որոնց համաձայն՝ մոտոտրանսպորտային միջոցներին, տրիցիկլերին, քվադրոցիկլերին, կցորդներին ու կիսակցորդներին հատկացվում է մեկ համարանիշ: Մինչդեռ ներկայացված խմբագրությամբ նախագծի ընդունման պարագայում (առանց զույգ հաշվառման համարանիշերի վարելու համար պատասխանատվություն նախատեսելով) մեկ հաշվառման համարանիշ ունեցող տրանսպորտային միջոցն առանց հաշվառման համարանիշի վարելն այլևս չի համարվի իրավախախտում:

Այս առումով նախագծի 1-ին հոդվածն անհրաժեշտ է հանել:

Վերը նշվածի համատեքստում անհրաժեշտ է հանել նաև նախագծի 2-րդ հոդվածը, փոխարենը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքի 123.5-րդ հոդվածի 13-րդ մասում «թեկուզ և մեկը» բառերը փոխարինել «երկուսն էլ» բառերով, իսկ օրենսգրքի 123.5-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«13.1. Տրանսպորտային միջոցը զույգ հաշվառման համարանիշեր ունենալու դեպքում համարվում է մեկ հաշվառման համարանիշով, եթե համարանիշերից մեկը ամրացված չէ դրա համար նախատեսված տեղում և ընթեռնելի չէ ինչպես շարժման ընթացքում, այնպես էլ կանգնած ժամանակ:»:

Միաժամանակ առաջարկում ենք օրենքի նախագծի 3-րդ հոդվածի սանկցիան համապատասխանեցնել ՀՀ կառավարության կողմից շրջանառության մեջ դրված և 11.09.2019 թ. ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված՝ տուգանային միավորների համակարգ ներդնելու մասին օրենսդրական նախաձեռնության (Կ-195-19.06.2019-ՊԱ-011/1) տրամաբանությանը: Մասնավորապես՝ 3-րդ հոդվածի սանկցիայում հիսնապատիկի փոխարեն

սահմանել տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանինն ապատիկի չափով և տուգանային միավորի կիրառում՝ 4 միավոր։

8 նոյեմբերի 2019 թվականի N 1641 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ռաֆիկ Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-323-23.10.2019-ՊԱ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 8

Երևան

ՆԱԽԱԳԻԾ
Պ-323-23.10.2019-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի այսուհետ (այսուհետ՝ օրենսգիրք) 123^5 հոդվածի 4-րդ մասում «Առանց» բառից հետո լրացնել «զույգ» բառը:

Հոդված 2. Օրենսգրքի 123^5 հոդվածի 13-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«Տրանսպորտային միջոցը համարվում է զույգ համարանիշով, եթե համարանիշերն ամրացված են դրանց համար նախատեսված տեղում եւ ընթեռնելի են ինչպես շարժման ընթացքում, այնպես էլ կանգնած ժամանակ:

Տրանսպորտային միջոցը համարվում է մեկ համարանիշով, եթե համարանիշերից մեկը ամրացված չէ դրա համար նախատեսված տեղում եւ ընթեռնելի չէ ինչպես շարժման ընթացքում, այնպես էլ կանգնած ժամանակ:»:

Հոդված 3. Օրենսգրքի 123^5 հոդվածը լրացնել նոր 16-րդ մասով.

«16. Զույգ հաշվառման համարանիշեր ունեցող տրանսպորտային միջոցը մեկ հաշվառման համարանիշով վարելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ու Մ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

1.Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություն կատարելը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենսդրական առկա լուծումների պայմաններում զույգ համարանիշ ունեցող տրանսպորտային միջոցի վարորդների հանդեպ կազմվում է նույն վարչական իրավախախտման արձանագրությունը բոլոր այն դեպքերում, երբ ինչպես մեկ համարանիշն է բացակայում կամ ոչ սահմանված տեղում է դրված, այնպես էլ միարժամանակ 2-ի բացակայության կամ ոչ սահմանված տեղում փակցնելու դեպքում սահմանվում է միեւնույն վարչական ակտը՝ 200000 դրամի չափով:

2.Առաջարկվող կարգավորման բնույթը.

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին օրենքով առաջարկվող փոփոխությունների պատճառն է.

Կարծում ենք օրենսդրական կարգավորմամբ չպետք է հավասարության նշան դրվի զույգ համարանիշ ունեցող տրանսպորտային միջոցների բոլոր այն վարորդների միջեւ, որոնց մի մասը տրանսպորտային միջոցը վարում է միայն մեկ պետհամարանիշով, իսկ մյուս մասի մոտ զույգն էլ բացակայում է: Այս հանգամանքը պատճառաբանում ենք նրանով, որ զույգ համարանիշի բացակայության դեպքում առերեւույթ առկա է ակնհայտ միտում՝ տրանսպորտային միջոցը վարել առանց պետհամարանիշի, քանի որ գրեթե անհավանական է այն իրավիճակը, որ որոշակի տարածքում երթեւեկելիս տրանսպորտային միջոցի զույգ համարանիշները կարող էին ընկած լինել վերջինիս վրայից կամ գողացված լինել եւ դրա մասին վարորդը չտեղեկանա կամ չնկատի: Իսկ ահա կարող են լինել իրավիճակներ, երբ ճանապարների ոչ պատշաճ որակի կամ ժամանակի ընթացքում պետհամարանիշն ամրացնող պտուտակների վնասման պայմաններում մեքենան վարելիս, ընթացքում, պետհամարանիշներից մեկը անկախ վարորդի գործողութուններից ընկնի մեքենայի վրայից: Հետեւաբար, նման իրավիճակներում, պետք է դրսեւորվի տարբերակված մոտեցում եւ վարչական իրավախախտման համար ներկայացվող տուգանքը պետք է լինի էականորեն ցածր:

50000 դրամ վարչական տուգանքը պատճառաբանում ենք այն հանգամանքով, որ այնուամենայնիվ վարչական տուգանքը պետք է լինի զգալի, որպեսզի օրինակ բացառենք այն դեպքերը, երբ վարորդը կարող է միտումնավոր հանել դիմացի պետհամարանիշը եւ արագ վարի կատարելով բազմաթիվ արագության խախտումներ եւ դրանց դիմաց ենթարկվի շատ փոքր, օրինակ 5000 կամ 10000 դրամ տուգանքով:

Այսպիսով, օրենսդրական վերը ներկայացված կարգավորման արդյունքում հաշվի է առնվում վերոնշյալ իրավիճակում վարորդների անմեղության կանխավարկածը եւ վարորդների համար առաջարկվում է մեղմացնող կարգավորում:

Առաջարկվող կարգավորումը

Առաջարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում տարբերակված մոտեցում ցուցաբերել այն դեպքերի համար, երբ զույգ համարանիշ ունեցող տրանսպորտային միջոցները երթեւեկում են առանց զույգ համարանիշի եւ այն դեպքերի համար, երբ բացակայում է միայն համարանիշներից մեկը:

Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունումը հնարավորություն կտա, որ բոլոր այն դեպքերում, երբ վարորդները երթեւեկում են մեկ պետհամարանիշով ենթարկվեն զգալիորեն ավելի քիչ վարչական պատասխանատվության, քան դեպքերում, երբ բացակայում է համարանիշներից միայն մեկը: